արձակումն ի նորին կապանացն։ Եւ զայով ե-
կեալ եհաս ի քաղաքն Բուրսայ, պատահեցաւ զի
յաւուրսն յայնոսիկ անդ էր եւ Խարբերդցի Ա-
րիստակէս վարդապետն, արդ՝ այս Արիստակէս
վարդապետն եւ այս Կեսարացի Գրիգոր վարդա-
պետն ունէին ընդ միմեանս ոխս նախանձու
յոյժ սաստիկ...։ Եւ ի պատճառէ այսր նա-
խանձու՝ բազում բանիւ եւ պէսպէս կերպիւ
խօսեցաւ Արիստակէս վարդապետն ընդ Նիկող ե-
պիսկոպոսին եւ արգել զնա ի գնալոյ առ Գրի-
գոր վարդապետ. երբեմն ասէր «դու եպիսկո-
պոս ես եւ նա վարդապետ՝ չունի իշխանութիւն
ի վերայ քո», երբեմն ասէր «ի զուր եւ ի նա-
խանձու բանադրեալ է զքեզ», երբեմն ասէր,
«եւ ես վարդապետ եմ իբրեւ զնա, ես արձակեմ
զքեզ ի կապանաց» եւ այլ բազում կերպիւ խօ-
սեցաւ եւ ոչ եթող գնալ ի Կեսարիա առ Գրի-
գոր վարդապետն։ Այնուհետեւ Նիկողն ինքն ոչ
գնաց՝ այլ գրեաց թուղթ խնդրանաց եւ աղե-
րսանաց առ Գրիգոր վարդապետն, թէ մինչ ի
Բուրսայ եկի, եւ աստէն հիւանդացայ եւ ան-
կեալ կամ ի մահիճս, վասն որոյ ոչ կարեմ
գալ, խնդրեմ զի բարձցես յինէն զբանադրանքն
եւ արձակեսցես ի կապանաց, եւ առաքեսցես
ինձ եւ ժողովրդեանն թուղթ օրհնութեան, զի
թերեւս աղօթիւք եւ օրհնութեամբ քով աստի
դարձայց եւ ողջութեամբ հասից ի տեղին իմ։
Իսկ վարդապետն ի տեսանել զգիրն անկեղծ ըն-